ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
19 մարտի 2020թ. N256-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
20 03 2020թ. N65-Լ

ՀԱՄԱՏԵՂՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2.2-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ ՊԵԿ) գաղտնիք համարվող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (այսուհետ՝ ՏՄՊՊՀ) տրամադրելու նպատակով, ՏՄՊՊՀ-ին ապահովում է ՊԵԿ-ի՝ նշված տեղեկատվությունը պարունակող էլեկտրոնային համակարգերին առցանց հասանելիություն:
2. ՊԵԿ-ի և ՏՄՊՊՀ-ի միջև գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փոխանցումն իրականացվում է գաղտնիության ռեժիմով ապահովված հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով:
3. Սույն հրամանի 1-ին կետով նշված տեղեկատվության տրամադրման ապահովումն իրականացվում է ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի կողմից իրավազորված աշխատակցի միջոցով:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Դավիթ Անանյան

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ
Գեղամ Գևորգյան